



Մամուլի հաղորդագրություն  
30 սեպտեմբերի 2021թ.

**«Գյուղական համայնքների զարգացում» թեմայով երկրորդ ամենամյա համաժողովը Լոռու ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում**

ԵՐԵՎԱՆ - «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ), ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, Հայաստանում ՄԱԿ-ի Չարգացման ծրագիրը (ՄԱՉԾ) Հայաստանում Եվրոպական միության ֆինանսական օժանդակությամբ կազմակերպել են «Գյուղական համայնքների զարգացում» թեմայով երկրորդ ամենամյա համաժողովը, որը կանցկացվի 2021թ. հոկտեմբերի 2-ին Լոռու մարզի ՔՈԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնում: Միջոցառումը մեկնարկում է ժամը 12:00-ին և ավարտվում՝ 19:30-ին:

Համաժողովի նպատակն է բացահայտել գյուղական համայնքների զարգացման տարբեր փորձառություններ, ներկայացնել լավագույն փորձը և հաջողված մոտեցումներ, քննարկել առաջացած խնդիրները հարթահարելու ուղիներ, բացահայտել համատեղ նախագծերի հնարավորություններ և ստեղծել հավանական համագործակցության հիմքեր:

Այս տարվա համաժողովի ձևաչափն իրենից ներկայացնում է թեմատիկ քննարկումների ու էքսպո բաղադրիչի համադրություն: Լինելու են 4 պանելային քննարկումներ հետևյալ թեմաներով.

- խելացի կառավարում՝ կառավարման նորարարական մոդելներ,
- կայուն աշխատատեղեր՝ ձեռներեցություն, թիրախային զբոսաշրջություն
- կանաչ ապագա գյուղատնտեսության համար
- սոցիալական վերականգնումը որպես համայնքի զարգացման նախադրյալ

Համաժողովին մասնակցում են գյուղական համայնքների զարգացման ոլորտում ծրագրեր իրականացնող տեղական ու միջազգային կազմակերպությունների, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչներ, անհատ ձեռներեցներ: Էքսպոյին իրենց ծառայություններն ու արտադրանքն են ներկայացնելու իրենց ձեռնարկատիրությամբ ու նախաձեռնություններով գյուղական համայնքների զարգացմանը նպաստող կազմակերպություններ Հայաստանի տարբեր մարզերից:



Առաջին համաժողովը տեղի է ունեցել 2019թ. նոյեմբերի 9-10-ը, իսկ 2020թ. այն չկայացավ ՔՈՎԻԴ-19-ի համավարակի պատճառով:

### «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի մասին

«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (ՔՈԱՖ) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնաստորագվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Ծիրակի և Տավուշի մարզերի 64 համայնքների ավելի քան 107,000 բնակիչները: 2015թ. սկսած՝ ՔՈԱՖ-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովում գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՔՈԱՖ ՍՄԱՐԹ առաջին կենտրոնը տեղակայված է Լոռու մարզի Դեբետ գյուղում. բացումը կայացել է 2018 թ. մայիսի 27-ին:

### ՄԱՉԾ-ի մասին

ՄԱՉԾ-ն Միավորված ազգերի կազմակերպության առաջատար կազմակերպությունն է, որը պայքարում է աղքատության անարդարությանը, անհավասարությանը և կլիմայի փոփոխությանը վերջ դնելու նպատակով: Աշխատելով 170 երկրներում փորձագետների և գործընկերների մեր ընդարձակ ցանցի հետ՝ մենք պետություններին օգնում ենք ստեղծել միասնական, տեւական լուծումներ մարդկանց և երկիր մոլորակի համար: Հայաստանում ՄԱՉԾ-ի գրասենյակը հիմնադրվել է 1993 թվականին և աջակցում է կառավարությանը՝ կենսագործել զարգացման իր գերակայությունները և Կայուն զարգացման նպատակները: